# «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետև` օրենք)` 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում, 7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 2-րդ մաս.

«Բժշկական հիմնարկները (հաստատությունները) պարտավոր են առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձի առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման վերաբերյալ տեղեկությունները տրամադրել`

1) ոստիկանությանը անհապաղ, եթե դրանք հիմք են տալիս ենթադրելու, որ անձի առողջությանը կամ կյանքին վնաս է պատճառվել հանցագործության, այդ թվում` ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, կամ երբ անձի մոտ առկա հիվանդությունը կարող է վտանգ ներկայացնել շրջապատի համար.

2) հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին, դատարանին` քրեական գործի քննության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին` օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու, ինչպես նաև թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն)

նյութերի ապօրինի շրջանառությունը կանխարգելելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ գրավոր հարցումների հիման վրա:»:

**ՀՈԴՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: